



«ԵՐԴԻՔ»՝ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՌՑԱՆՑ ՅԱՅՏԱԳԻՐ

Արեւմտահայերէնով նոր, բարձրորակ ստեղծարար յայտագիր մը նամբայ ելաւ երեխաներու համար: Զուարթ, սրամիտ եւ մանկավարժական մօտեցումով յղացուած այս առցանց տեսերիզները կարելի է գտնել «Երդիք»ի կայքէջին վրայ (www.yertik.com) կամ ԵուԹիւպով ([երդիք - YouTube](https://www.youtube.com/channel/UC...)):

Երգերու, պատմութիւններու եւ խաղերու ընդմէջէն, խամանիկներու, հանելուկներու եւ կարճ քատերախաղիկներու միջոցաւ, «Երդիք»ը գուարճալի եւ հանգիստ միջավայր մը կը ստեղծէ, ուր մինչեւ 12 տարեկան երեխաներ եւ պատանիներ կրնան գուարճանալ ու միեւնոյն ժամանակ՝ իրենց հաղորդակցական ունակութիւնները զարգացնել: Նոր բառապաշար կ'ամբարեն, արեւմտահայերէն կը սորվին կամ իրենց ունեցած գիտութիւնը կը բարելաւեն, եւ ամենէն կարեւորը՝ Սփիւռքի մէջ իրենց առօրեայ կեանքին մաս կազմող լեզուով նոր ու հետաքրքրական աշխարհ մը կը բացայայտեն:

«Երդիք»ը շաբաթական երկու տեսերիզներ կ'արտադրէ: «Ակուլ Տուկուլ»ը երկուէն վեց տարեկաններու համար է: Նոյնիսկ հայախօս չեղող երեխաները կրնան դիտել եւ հետեւիլ յայտագրին: Յատուկ կերպարներու պիտի ծանօթանան հոն, առիթ տալով որ իրենց լսողական, տեսողական ունակութիւնները զարգանան, ու ասոնց հետ՝ իրենց ստեղծարար կարողութիւնները եւ իրենց յիշողութիւնը:

«Ալնիս Բալնիս»ը եօթէն տասներկու տարեկաններու համար է: Յայտագիրը կ'ընդգրկէ առօրեայէն քաղուած տարբեր նիւթեր, երեխաներուն եւ պատանիներուն առիթ տալով որ բարելաւեն հայերէնով հաղորդակցելու իրենց կարողութիւնը ու զարգացնեն իրենց վերլուծական ունակութիւնները: Այս տեսերիզներուն միջոցաւ՝ նոր գաղափարներ կը ծագին, նոր բառամթերքով տարբեր նիւթեր կ'արծարծուին: Յայտագիրը երեխաները կը քաջալերէ որպէսզի իրենց հետաքրքրութիւնը խորացնեն եւ «ինչո՞ւ»ն ու «ինչպէ՞ս»ը հետապնդեն:

«Երդիք»ը նոր յայտագիր մըն է, հովանաւորուած՝ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքին կողմէ: Եօթը երիտասարդներ, Հիմնարկութեան նախաձեռնութեամբ գործադրուող լեզուական իւրացումի «Զարմանագան» ծրագիրէն ներշնչուած, յանձն առած են յայտագրին ստեղծարար բովանդակութեան պատրաստութիւնը: «Երդիք»ի այդ խմբակին



մասնակիցներն են՝ Սեւանա Ջագրեան, Վահան Քերովբեան, Գայիանէ Կավրիլօֆ,
Հրայր Գալեմֆէրեան, Անոյշ Միսեան, Վահագն Քէշիշեան եւ Ծալի Պիլալեան:

Ծնողներ եւ դաստիարակներ կրնան հաւասարապէս գործածել «Երդիֆ»ին
կայքէջը, ու այդ ձեւով արեւմտահայերէնը հնչեցնել իրենց երդիֆներուն տակ:
Զուարճալի զբաղումներով, բոլորին տրամադրելի եւ մուտքը ազատ «Ակուլ
Տուկուլ»ը եւ «Ալնիս Բալնիս»ը հանելի միջավայր մը կը ստեղծեն բոլորին
համար: